

ԵՐԶԱՆ ԿՈՒԹԻՒՆ



Քրիստոս կը յայտնէ մեզ զճմարտութիւն: Եթէ ճմարտութիւն կայ տեսականապէս, պէտք է ըլլայ նաև գործնականապէս: Եթէ կեանք յԱստուած երանելի է և ճմարտ, նոյնպիսի պէտք է ըլլայ նաև իրական կենաց մէջ, վասն զի կամ իրական կեանքը պէտք է յարմարի Քրիստոսի վարդապետութեան, կամ Քրիստոսի վարդապետութիւնը սխալ է:

Քրիստոս կը կոչէ զմեզ ի խաւարէ ի լոյս, և ոչ թէ ի լուսոյ ի խաւար: Կը գթայ մարդկան վրայ և կը համարի զանոնք մոլորեալ ոչխարներ, և զանոնք առ ինքն ձգելու համար կը խոստանայ անոնց բարի հովիւ մը և պարարտ արօտներ: Բայց սակայն, կանուխ կը յայտնէ իւր աշակերտաց՝ թէ պիտի չարչարուին նոքա իւր վարդապետութեան համար, և կ'երգունցընէ զանոնք անասան մնալու: Բայց չըսեր, թէ իրեն հետեւելով աւելի պիտի չարչարուին, քան թէ աշխարհիս հետեւելով: Կ'ըսէ թէ մարդկանց բարոյականը դժբաղդ կ'ընէ, և թէ իւր աշակերտները պիտի գրտնեն զերջանկութիւն:

Քրիստոսի վարդապետութիւնը ստուգիւ այս է. իւր խօսքերուն յստակութիւնը, իւր վարդապետութեան ընդհանուր իմաստը, իւր և իւր աշակերտաց կեանքը անոր մէկ մէկ ապացոյցներ են:

Լաւ կ'իմանանք որ Քրիստոսի աշակերտք աւելի երջանիկ են՝ քան աշխարհի բարոյականի հետեւող մարդիկ. առաջինքն՝ բարի գործելով, և մէկու մը ատելութիւն չգրգռելով՝ են:

Թակայ են միայն հալածմանց չարաց. մինչդեռ աշխարհի արբանեակներն՝ իբրև կենաց օրէնք՝ ունին զօրէնս կռուոյ, և զմիմեանս կ'ուտեն: Միւս կողմանէ, այն փորձերը որոնց են թակոյ են մարդիկ՝ առհասարակ հասարակ են ամենուն: Սակայն և այնպէս, մինչդեռ Քրիստոսի հետեւողք կը համբերեն անոնց հանդարտութեամբ և զանոնք կարևոր կը համարին, աշխարհի հետեւողք կ'ապստամբին անոնց դէմ իրենց բոլոր զօրութեամբ, և չեն գիտեր թէ ինչո՞ւ կը կրեն:

Աչք մը տայ իւրաքանչիւր դը իւր կենաց տխուր վարկեաններուն, յիշէ նիւթական և բարոյական ցաւերը՝ զորս կրեր է. և հարցընէ իրեն, թէ արդեօք ո՞ր սկզբամբ համբերեց այնչափ աղետից. Քրիստոսի՝ թէ աշխարհի հոգւով: Եթէ մէկը լուրջ կերպով դառնայ ակնարկ մը տայ իւր կենաց ընթացից, պիտի տեսնէ թէ երբեք վիշտ մը կրած չէ Քրիստոսի վարդապետութեան համար, այլ իւր կենաց թշուառութեանց մեծագոյն մասը անկից է՝ որ ոտքի տակ անտելով իւր խզմտանքը, հետեւեր է աշխարհի բարոյականին:

Կենացս մէջ՝ երջանիկ ըստ աշխարհի՝ աշխարհի համար կրած թշուառութիւնքս բաւական են զիս Քրիստոսի մարտիրոս մի ընելու. այն ամեն ախտերը՝ որ պղծեցին իմ կեանքս. սկսելով արբեցութեան և շուայտութեանց տարիներէն՝ յորս դեռ ուսանող էի, և վերջացնելով մենամարտութեամբք, հիւանդութեամբք, ան-

կանոն և վշտագին հանգամանքներով՝ որուն մէջ կը տարուբերէի, այս ամենը մարտիրոսութիւն մ'է աշխարհիս բազմի վրայ ողջակէզ եղած :

Եւ կը խօսիմ միայն իմ անհատական կենացս վրայ, որ ըստ աշխարհիս, բացարձակապէս երջանիկ է : Բայց արդեօք որչափ են աշխարհի գոհերը, որոց չարչարանքը չեմ կարող երեւակայել :

Համոզուած ենք մեք թէ թշուառութիւնք, որոց պատճառը մեք եմք, կենաց սովորական պայմաններն են : Ուստի չենք կրնար հասկնալ Քրիստոսի այս խօսքը թէ՛ չարիք մի՛ ընէք և երջանիկ ապրեցէք :

Անցէք, ամբողի մը միջէն, լաւ կ'ըլլայ քաղաքի մը ամբոխէն. նկատեցէք յոգնած, անհանգիստ և տխուր դէմքերը. մտքերնիդ բերէք ձեր և ձեր մտերմաց կեանքը. յիշեցէք այն սպանութիւններն ու անձնասպանութիւնները՝ զորս լսած էք. հարցուցէք ձեզ այն մահերուն, վշտերուն և յուսահատութեանց պատճառը, և պիտի տեսնէք, թէ որչափ ալ ձեզ տարօրինակ երևի այս, մարդկային թշուառութեանց տասին իններորդ պատճառը կեանքն է, և թէ այս վշտերը անօգուտ են, և թէ կրնային անոնք գոյութիւն չունենալ, և թէ մարդկանց մեծագոյն մասը աշխարհային գաղափարաց մարտիրոսք են :

Շատ ատեն չէ, այնանային անձրևալից կիրակի մը, անցայ տրամուդեալ Սուբհարէվի աշտարակին մտակայ վաճառանոցէն : Կէս մոռն հեռաւորութեամբ կառքը անցաւ խիտ ամբոխի մը միջէն, որ մեր հուռէն վերջապիս կը փակուէր : Առաւօտէ մինչև իրիկուն այն բիւրաւոր մարդիկ անօթի և կարկատուն հագուստով, զիրար կը հրեն տղմին մէջ քայելով, կը վիճեն մէկմէկու հետ, կը խաբեն զիրար, և զիրար կ'ատեն : Եւ այս բանս կը պատահի Մոսկուայի և

այլ քաղաքաց ամեն վաճառատեղեաց մէջ : Այս մարդիկները պիտի անցընեն իրիկունը պանդոկներու մէջ, և գիշերը իրենց խարխուլ տանց մէջ, և կիրակին անոնց համար՝ է լաւագոյն օրը. երկուշաբթի նորէն կը սկսին անիծեալ կենաց :

Մտածեցէք այն մարդկանց կենաց վրայ, այն պայմանին վրայ, յորմէ կը հրաժարին, և այն պայմանին վրայ զոր կ'ընտրեն : Մտածեցէք անոնց աշխատութեանց վրայ, և պիտի տեսնէք որ մարտիրոսք են :

Թողած են իրենց դաշտերը, իրենց տունները, հայրերը, եղբարքը, յաճախ նաև կինը և որդիքը. ամին բանէ հրաժարած են և գացեր են քաղաք, շահելու համար զայն՝ զոր աշխարհ կարևոր կը կարծէ. ամենուն նպատակը այս է սկսեալ գործաւորէն, կատապանէն, դերձակէն, անարգ կնոջմէն՝ մինչև հարուստ վաճառականը, բարձր պաշտօնեայն, և անոնց իւրաքանչիւրին կինը, առանց խօսելու հազարաւոր թշուառաց վրայ՝ որ կորուսած են ամենայն ինչ. և կ'ապրին մնացորդք և օղիով գիշերային բնակարաններու մէջ :

Մտէք այն ամբոխը, ազքատէն մինչև հարուստը. փնտռեցէք մարդ մը որ դո՛ս ըսուի, և հաւատայ թէ ունի աշխարհի կարևոր համարածը. չպիտի կարենաք գտնել մի ի հազարաց : Ամենքը կը թափեն իրենց ճիգը ձեռք ձգելու այն ամենայն զորս աշխարհ անոնց առջև կը դնէ, և որոց պակասութիւնը թշուառութիւն է այս աշխարհիս համար : Այնպէս որ, հազիւ ցանկացեալ բարին կը ժառանգեն, աշխարհ ուրիշ մ'ալ կը ներկայացնէ աւելի կարևոր, և Սիսիփոսի աշխատութիւնը կը տեւ մշտնջենապէս : Նկատեցէք ընկերական սանդուխը, ի մարդոյ որ կը ծախսէ 300 ուրբի մինչև այն՝ որ կը ծախսէ 50,000, պիտի տեսնէք որ չի կայ

և ոչ մէկ հոգի, որ շաշխատի կատա-
զարար վաստակելու 400 ուռբլի՝ եթէ
ունի 300. շահելու 500՝ եթէ ունի
400, և այսպէս հետզհետէ: Եւ չի կայ
և ոչ մէկ հոգի, որ 500 ուռբլի ու-
նենալով, ուզէ իջնել ի պայման անոր
որ ունի 400. կամ եթէ կամաւ գոհ
ըլլայ 400ին, այն ալ կ'ընէ՝ որպէս զի
մէկգի դնէ անկից այնչափը իբրև
աւելի:

Մարդ մը որ ունի այսօր զգեստ
մի ըստ նորաձևութեան, վաղը պիտի
ուզէ ժամացոյց մի շղթայով. միւս
օր յարկ մը բազմոցներով, մեծ աշ-
տանակներով, սրահի օթոցներով և
թաւշեայ վարագոյրներով. ապա պի-
տի ուզէ տուն մը, ձիեր, շրջանակ-
ներ: Վերջապէս, իբրև հետևանք այս
մեծամեծ ճգանց, հիւանդ կ'իջնայ և
կը մեռնի: Ուրիշ մը կը շարունակէ
իւր գործը և կը զոհէ իւր կեանքը
Մողթայ և կը մեռնի նմանապէս ա-
ռանց գիտնալու թէ ինչո՞ւ այնչափ
նեղութիւն կրեց: Բայց թերևս այս
կեանքը երջանիկ է ինքն յինքեան:

Բապդատեանք զայն անոր հետ՝ զոր
մարդիկ երջանկութիւն կը կոչեն, և
պիտի տեսնենք որ անհուն կերպով
ապերջանիկ է: Որո՞նք են արդ ա-
ռաջին պայմանք երջանկութեան, զորս
ոչ դը կը համարձակի ժխտել:

Մին յառաջին պայմանաց, զոր ա-
մենք կ'ընդունին, է անբարատութիւն
այն կապանաց՝ որ կը զօրէ զմարդ-
ընդ բնութեան, այսինքն է արեգա-
կան լուսոյն, ազատ օդոյն, դաշտոց,
տնկոց և կենդանեաց հետ: Ամեն տեղ և
ամեն ժամադակ մարդիկ համարեցան
իբրև թշուառութիւն մը այս բարեաց
պակասութիւնը. այս պակասութիւնը
ամենէն աւելի բանտարկեալք կը
զգան:

Նայեցէք արդ ըստ օրինաց աշ-
խարհի ապրող մարդկանց գոյութեան
վրայ: Որչափ աւելի բարձր ըլլայ
աստիճանը յաշխարհի, նոյնչափ ա-

ւելի մեծ է երանութեան այս պայ-
մանին զրկումը, և նուազ կը վայլեն
արեգական լոյսը, դաշտերը, անտառ-
ները, վայրի և ընտանի կենդանինե-
րը: Անոնց մեծագոյն մասը — իսկ
կանայք գրեթէ ամենքը — կը հաս-
նին ծերութեան առանց նկատած ըլ-
լալու մի կամ երկու անգամէ աւելի
արևուն ելքը, մարգերը և անտառակ-
ները, և այն ալ յիրաւի վագոնի մը
կամ կառքի մը պատուհանիկէն. ա-
ռանց տնկած ըլլալու երբէք տունկ
մը, սնուցանելու կով մը, ձի մը և
հաւ մը. առանց իսկ դիտնալու թէ
ինչպէս կը ծնանին, կ'աճին և կ'ապ-
րին կենդանիք: Կը ճանչնան միայն
գործածները, քարերը, մարդուս ձե-
ռք շինուած շտկուած փայտերը, և
այս իրերն ալ կը տեսնեն, ոչ ի լոյս
արեգական, այլ արուեստական լու-
սով մը, կը լսեն միայն մեղեմայից,
կառաց, թնդառնթաց շահողն ու շա-
ռաչը, և երաժշտական գործեաց ա-
րուեստական ձայնը. կը ծծեն կը շըն-
չեն ալկոհոլի գարշելի բուրմունքը և
ժխախտի ծուխը. իրենց ձեռաց և
ոտից տակ հիւսուածքներ միայն
և փայտ կը զգան, և որովհետև իրենց
ստամոքսը տկարացած է, նեխեալ և
գարշահոտ կերակուրներ կ'ուտեն:
Եւ ոչ ճամբորդութիւնք կրնան զա-
նոնք ապաքինել, կը փակուին մեծ
տուներու մէջ, և ուր որ ալ երթան
ի դաշտ կամ օտար երկիր նոյն փայ-
տը և նոյն քարը կը զգան իրենց
ոտից տակ. նոյն վարագոյրք կը ծած-
կեն անոնց աչքէն արեգական լոյսը.
Նոյն ծառայք, կառուպանք կամ բեռ-
նակիրք կը խափանեն զանոնք դաշտե-
րու, տնկոց և կենդանեաց հազոր-
գակցութենէն: Ուր որ ալ երթան,
բնութեան այս երջանկութենէն զուրկ
են, նման բանտարկելոց: Եւ ինչպէս
այս վերջինքս կը մխիթարուին տես-
նելով խոտը որ կ'աճի ինքնաբերա-
բար իրենց բանտին գաւթին մէջ,

կամ դիտելով սարգի մը կամ մկան մը գաղտագողի անցքը, նոյնպէս ա. նոնք կը մխիթարուին նայելով ջերմա. նոցի տկար տնկոց, թուլթակի, ճիւղ. ներու և կապկի վրայ, ո՞րք իրենց պէս վանդակներու մէջ կը սնանին:

Երկրորդ պայման երջանկութեան՝ է աշխատութիւն. աշխատութիւն յօ. ժարակամ և ազատ. ապա աշխատու. թիւն նիւթական, որ ախորժակ կու տայ և քուն խոր և կազդուրիչ: Արդ, ըստ աշխարհի, որչափ որ մէկու մը վիճակը նախանձելի է, նոյնչափ հեռի է այն՝ երջանկութեան այս երկրորդ պայմանէն: Այս աշխարհի ամեն եր. ջանիկք, այսինքն գործատեալք և մե. ծատունք, զուրկ են որ և իցէ նիւթա. կան աշխատութենէ, ինչպէս բան. տարկեալները: Եր կռուին նոքա, բայց ի գուր, այն հիւանդութեանց դէմ որ պտուղ են այս զրկման, և ընդ. դէմ ձանձրութեան որ զիրենք կը կրժէ: Կ'ըսեմ թէ իրենց կուր զուր է, վասն զի աշխատութիւնը այն ա. տեն միայն տողջարար է՝ եր կա. բեր որ է, մինչդեռ անոնց քով բան մը չի պակսիր: Ուրիշ պարագայից մէջ աշխարհի մարդիկ կ'ընին աշխատու. թիւն մը՝ զոր կ'ատեն, ինչպէս սե. զանաւորք, հոգաբարձուք, և այլք: Ե'ըսեմ թէ կ'ատեն, վասն զի չեմ գտած անոնմէ և ոչ մին, որ զգայ իւր աշխատութեան մէջ հաճոյք մը հաւասար հաճոյից դռնապանին՝ որ դրան առջևի ձիւնը կ'աւլէ: Բոլոր այս երջանիկք, որ են կամ գուր կաշ. խատուութենէ, կամ ստիպելք ատելի աշխատութեան մը, ստուգիւ. դատա. պարտելոց վիճակին մէջ կը գտնուին:

Երրորդ պայման անհրաժեշտ եր. ջանկութեան՝ է ընտանիք. Հոս ալ, որչափ որ մարդ մը գերաստիճան է յաշխարհի, այնչափ նուազ կը ճանա. չէ այս երջանկութիւնը: Աշխարհի մարդոց մեծ մաս մը կը մերժեն ընտանեկան ուրախութիւնները: Շատ

անգամ օրինաւոր միութեանց մէջ որդիք բեռն են ծնողաց. որոնք կը զրկուին անոնց հետ ի միասին ապրե. լու խնդութենէն, վասն զի, ըստ ի. բննց սկզբանց, պէտք են յանձնել գա. նոնք այլոց, նախ օտար անձանց, ու. ըիշ աշխարհներէ եկած, և ապա ու. սուցչաց, այնպէս որ իրենց համար ընտանիքը աղբիւր է չփոթից և թը. շուտութեան: Շատ ապշեցուցիչ բան է լսել ծնողաց բերնէն այս պատճա. ռաբանութիւնը՝ որով զիրենք կ'ար. դարացնեն. « Ես ինձ համար բանի մը պէտք չունիմ, կեանքն ինձ բեռ մ'է, բայց կ'ապրիմ և կ'աշխատիմ որդւոց համար »: Իբր թէ ըսէր. « Փորձով գիտեմ որ մեր կեանքը ապ. երջանիկ է. անոր համար կը դաս. տիարակեմ որդիք այն կերպով՝ որ ինձ պէս ապերջանիկ ըլլան: Եւ ո. բովհետե կերենք կը սիրեմ, կը տա. նիմ՝ զանոնք նիւթական և բարոյա. կան ապականութեամբ լի քաղաքի մը մէջ, կը յանձնեմ զանոնք օտարաց ձեռքը, որ զանոնք կրթելու ատեն, իրենց անձնական շահը միայն կը նային, և կ'ապականեմ զանոնք լի խղճմտանօք թէ բարոյապէս և թէ մտաւորապէս »:

Երանութեան չորրորդ պայմանը կը կայանայ ամեն մարդկանց հետ բարեկամական յարաբերութիւն ու. նենալուն մէջ: Բայց աշխարհի մար. դիկ զուրկ են նաև երջանկութեան այս կարևոր պայմանէն: Որչափ որ գէպ ի վեր բարձրանայ մէկը, նոյն. չափ ավերութեանց չըլանակը կը փոքրկանայ, մինչդեռ գիւղացւոց հա. մար բոլոր մարդկութիւնը դիւրամատ. չելի է, և եթէ կայ միլիոն մը մարդ՝ որ չուզեր խոնարհիլ մինչև անոնց, կը մնան սակաւին ութսուն միլիոն աշխատաւորք իրենց պէս, յԱրխան. գելէ մինչև յԱթտէրխան, որոնց հետ կապուած կը զգան զիրենք սերտ եզ. բայրութեան հանգուցիւք, և պէտք

չունին այցելութեանց և ներկայացմանց: Գործաւոր մը և իւր կինը՝ իրենց պէս հարիւրաւորներ կը հաշուեն. բայց բարձրագոյնք կը մերժեն զանոնք իրենց շրջա՝ ահէն, և անոնք ալ՝ իրենց կարգին՝ իրենց ստորնագոյններէն հեռի կը մնան: Գալով իշխանաց, միլիոնատեարց և իրենց ընտանեաց, որոնց շրջանակը հազիւ քանի մը սակաւաւոր անձինք կը բովանդակէ՝ նոյն աստիճանաւ և հաւասար հարստութեամբ: Մի թէ ասիկայ բանտարկելոյ կեանք չէ՞, որուն շուրջը ուրիշ բան չիկայ, բայց եթէ երկու կամ երեք պահապաններ:

Հուսկ, հինգերորդ պայման երջանկութեան է առողջութիւն և մահ անչարչար: Նա և այս նկատմամբ չենք կրնար երջանկութիւն գտնել աշխարհի բարձր շրջանակաց մէջ: Առէք մէկ կողմանէ երկու անձինք, այր և կին, չափաւոր աստիճանաւ, միւս կողմանէ խումբ մը գեղուկներ՝ նոյնպէս չափաւոր աստիճանաւ, Համեմատեցէք անոնց կեանքը և պիտի տեսնէք որ հանդերձ զրկմամբ և չափազանց աշխատութեամբ՝ որուն ստիպուած են գիւղացիք, մարդիկ և կանայք այնչափ աւելի քաջառողջ են, որչափ աւելի ընկերական սանդղուխին ստորին աստիճաններուն վրայ կը գտնուին, և փոխադարձաբար այնչափ աւելի հիւանդ՝ որչափ դէպ ի վեր կը բարձրանան: Այս վերջնոց մէջ գտնել մէկը որ առողջ ըլլայ, և ըլլայ կարօտ ամառնային պարբերական խնամոց, է գործ այնչափ աւելի դժուարագիւտ, որչափ դժուար է գտնելն հիւանդ անձ մը աշխատաւորաց մէջ: Այն մեր երջանիկ համարածները սկսած են, ամենքը առանց բացառութեան, կանխահաս պակասութեամբ մը՝ որ իրենց էութեան կարևոր պայման մը դարձած է: Ամենքը ճաղատ են և ակոսանին թափած այն հասակին մէջ՝ յորում գեղ-

ջուկք իրենց կայտառ առուգութեան մէջ են: Ամենքը ջղաց, ստամոքսի և ուրիշ գործարանաց հիւանդութիւններ կը կրեն որոնք յառաջ եկած են ի շուայլութենէ, յարեցութեանց, ի շուայտանաց և ի բժշկական դարմանոց: Անոնք որ երիտասարդ չեն մեռնիր, իրենց կենաց կէսը կ'անցընեն բնափիտն (morphine) շնչելով, կ'ըլլան եղկելի հայմեր, անկարող վայելելու, և կ'ապրին իբրև հացկատակ, նման այն մըջմանց՝ որ իրենց գերիններէն կը խնամուին: Տեսէք ինչպէս կը մեռնին. այս ոք կը յիմարանայ. ուրիշ մը անանուն հիւանդութեան տակ կ'ընկնի. իրարու ետև ամենքը զոհ կ'ըլլան աշխարհի այժման կենաց. և բիւրք մարդկան նոցա կը հետեւին, և մարտիրոսաց նման՝ կը փնտռեն այս մարդիկ վիշտ և ուշնչութիւն իրենց էութեան:

Ամբողջ ազգեր կը նետուին Մոլոքայ սայլին ներքև. սայլը կ'անցնի, զանոնք կը ճմլէ, և նոր զոհերը կ'ըլլան անուոց տակ նզովք ի շրթունս:

Կ'ըսուի թէ դժուարին է բմբունել Քրիստոսի վարդապետութիւնը, երբ կ'ըսէ. « Ով որ կ'ուզէ իմ ետևէս գալ՝ թողու իւր դաշտերը, տունը, եղբայրները, և զայ աս իս որ Աստուած եմ, և պիտի ընդունի ինձմէ հարիւրապատիկ իւր կորուսածին »: Մինչդեռ, երբ աշխարհ կ'աղաղակէ. « թո՛ղ քու տունդ, քու դաշտերդ, և գիւղի եղբայրներդ ցանկալի քաղաքը գալու համար », մէկը դժուար բան մը չի գտներ այս պատուիրանին մէջ, և նոյն իսկ ընտանիք խորհուրդ կու տան իրենց որդուց մեկնելու ի քաղաք:

Ո՛հ, եթէ այն նպատակին առ որ կը դիմէ աշխարհ՝ դիւրին հաճոյական և անվտանգ ըլլար հասնիլը, կարելի էր հաւատալ թէ Քրիստոսի դրած նպատակը դժուարին և պակուցիչ է: Բայց ահա իրապէս աւելի տաժանելի է հետեւի աշխարհի բարոյական նին՝ քան թէ Քրիստոսի:

Կ'ըսուի թէ Քրիստոսի վարդապետութիւնը ունեցաւ անգամ մը իւր մարտիրոսները: Առժամանակեայ դէպք մ'է այս: 1800 տարեաց ընթացից մէջ կը համրուին 380,000 մարտիրոսք Քրիստոսի համար, կամայ կամ ակամայ, Հաշուեցէք արդաշխարհի մարտիրոսները. պիտի տեսնէք որ տա մի մարտիրոս Քրիստոսի՝ կան հազարներ այս վերջիներէս, և են մարտիրոսք՝ որոց չարչարանքը հարիւրապատիկ աւելի անգութ եղած են: Միայն պատերազմի մէջ մեռած մարդոց թիւը դարուս մէջ միլիոններ կը համրուին. և բոլոր ասոնք աշխարհի մարտիրոսք են, վասն զի եթէ մարդկութիւնը Քրիստոսի վարդապետութեան հետեւէր, մարդիկ չպիտի սպաննէին զմիմեանս:

Երբ մարդ դադրի հաւատք ընծայելէ աշխարհի գողափարաց, որ առջևը կը դնէ ոսկեզարդ ժապաւէններ, ժամացուցի շղթայն և ուրիշ անօգուտ իրերը. երբ նա համոզուի թէ պէտք է խոյս տալ այս յիմարութիւններէն, այն ատեն չպիտի ճանչնայ այլ ևս ոչ վիշտ, ոչ մշտառև անձկութիւններ, և ոչ յոգնիլ առանց հանգստեան և նպատակի. այլ ևս չը պիտի հրաժարի ի ընութենէ, իւր յարմար աշխատութենէն, ընտանիքէն և յառողջութենէն. չպիտի մեռնի այլ ևս ազտեղի և ցաւազին մահուամբ:

Քրիստոս չուզեր որ մենք մարտիրոս

րոս ըլլանք. ընդ հակառակն, կ'ուսուցանէ մեզ չի չարչարել զմեզ սնտոի ընդ օդս պատկերներով:

Քրիստոսի վարդապետութիւնը բնականցական խոր իմաստ մ'ունի. այս իմաստը տիեզերական է, և կ'ընդգրկէ զբոլոր մարդկութիւն, բայց յայտնի է նաև, պարզ և գործնական և յարմար կենաց իւրաքանչիւր մարդու: Ձոր այսպէս կարելի է համառօտել: Քրիստոս կ'ուսուցանէ մարդոց յիմարութիւններ չի գործել: Այս է իւր վարդապետութեան պարզագոյն և մերձաւորագոյն բացատրութիւնը:

Քրիստոս կ'ըսէ. « Մի բարկանար, մի հպարտանար զի ապշութիւն է: Եթէ բարկանաս և զեղբայրդ թշնամանես, պիտի նեղուիս »: Ապա վրայ կը բերէ: « Ձարի չար մի հատուցաներ, վասնզի ըրած չարիդ հարիւրապատիկ պիտի հատուցուի քեզ »: Եւ կը յաւելու. « Մի համարիր օտարական զանոնք՝ որ մէկ երկիր կը բռնակին և քու լեզուէդ տարբեր լեզուով կը խօսին: Եթէ զանոնք թշնամի համարիս, պիտի զարթուցանես ի նոսա նոյն զգացմունքները և չարագոյն պիտի ըլլայ քեզ: Անոր համար խոյս տուր այս ամեն անմտութիւններէն և բարիք պիտի գտնես »:

Յիրաւի՝ Քրիստոսի բարոյականի՞ն մէջ կը գտնուի երջանկութիւն:

Գրողոց

